ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 127

19 դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017 թվականի N3-Ա և N 4-Ա որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղարի գործառույթն իրականացնող՝ Ա. Էվոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 3-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀԱՂՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16.10.2017Թ. N 59-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված նկուղային հարկով, բաց պատշգամբով բնակելի տունը, անասնագոմը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի արևմտյան մասում գտնվող(ծածկագիր 06-060-0231-0012) ,ինքնակամ կառուցված, ընդհանուր 51.0 քմ արտաքին մակերեսով (43.1 քմ ներքին մակերեսով) նկուղային հարկով, բաց պատշգամբով բնակելի տան և 11.8 քմ արտաքին մակերեսով (8.7 քմ ներքին մակերեսով) անասնագոմի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի արևմտյան մասում գտնվող (ծածկագիր 06-060-0231-0012), 2007թ. ինքնակամ կառուցված, 51.0 քմ արտաքին մակերեսով նկուղային հարկով, բաց պատշգամբով բնակելի տունը, 11.8 քմ արտաքին մակերեսով անասնագոմը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.1 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի արևմտյան մասում գտնվող բնակելի տանը տրամադրել Ալավերդի համայնք, Հաղպատ բնակավայր, փողոց 11, տուն N 52 փոստային հասցե:
4. Շինության զբաղեցրած 0.1 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի գործառույթն իրականացնողին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված նկուղային հարկով, բաց պատշգամբով բնակելի տան, անասնագոմի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել Ալավերդու համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի գործառույթն իրականացնողին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Ալբերտ Հովսեփյանին, օրինականացված՝ նկուղային հարկով, բաց պատշգամբով բնակելի տունը, անասնագոմը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
7. Ուժը կորցրած ճանաչել Հաղպատի համայնքի ղեկավարի 16.10.2017թ. «Հաղպատ համայնքի 06-060-031-0012 ծածկագրի բնակելի տան, անասնագոմի և զբաղեցրած հողամասի նկատմամբ Հրանտ Վարդանյանի սեփականության իրավունքը վերականգնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 59-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2017թ. դեկտեմբերի 18
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 4-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ.՝ Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ.՝ Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 19
ք. Ալավերդի